

ԱՀԴ 2015Ա: ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ_1-11

Տրված է n տարր պարունակող միաչափ զանգված:

Օգտվելով կարգավորման ալգորիթմից արտածել տրված միաչափ զանգվածի տարրերի կիսորդը՝ այսինքն այն տարրը, որը միաչափ զանգվածը բաժանում է երկու հավասար մասերի: Ընդ-որում կիսորդի մի կողմում գտնվում են այն տարրերը, որոնք չեն գերազանցում կիսորդը, իսկ մյուս կողմում կիսորդը գերազանցող տարրերը

Մուտքային տվյալներ.

Մուտքի առաջին տողում տրված է n կենտ բնական թիվը, որը չի գերազանցում 100000-ը: Երկրորդ տողում տրված են միաչափ զանգվածի տարրերը, որոնք ամբողջ թվեր են և բացարձակ արժեքով չեն գերազանցում 10^6 -ը:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակ.

N	stdin	stdout
1	5 3 1 4 2 5	3